ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 142-Ա

« 27 » ՄԱՅԻՍԻ 2025Թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 96-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2024 թվականի նոյեմբերի 29-ի N 2881-Ա հրամանը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել 2025 թվականի երկրորդ եռամսյակի ընթացքում Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնքում իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության բնագավառները, ժամանակահատվածը և հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

2. Իրավական և մասնագիտական հսկողության իրականացման գործընթացում ղեկավարվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի ապրիլի 9-ի N 03 հրամանով հաստատված հարցաշարով:

3. Անհրաժեշտության դեպքում իրավական և մասնագիտական հսկողության աշխատանքային խմբում ներգրավել մարզպետի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների այլ մասնագետների:

4. Մասնագիտական հսկողություն իրականացնելիս անհրաժեշտություն առաջանալու դեպքում աշխատանքային խմբում ներգրավել նաև մասնագիտական որակավորում ունեցող այլ անձանց (համաձայնությամբ):

5. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, իրավական հսկողության բարձրագույն մարմնի կողմից հաստատված օրինակելի ձևին համապատասխան կազմել արձանագրություն:

6. Մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարին՝ հսկողություն իրականացնելուց հետո մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ներկայացնել իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքում կազմված արձանագրությունները:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

Signed by: KOLYA MIKAELYAN 3507670100

Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ

ք. Եղեգնաձոր

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2025
թվականի մայիսի 27-ի թիվ 142Ա որոշման

2025 թվականի երկրորդ եռամսյակում Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնքում իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության բնագավառները, ժամանակահատվածը և հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը

հ/հ	Համայնքի անվանում	Իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության ժամանակահատվածը	Իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության բնագավառ	Իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնող պաշտոնատար անձիք	
				Զբաղեցրած պաշտոն (աշխատանքային խմբի ղեկավար, անդամ)	Անուն, ազգանուն
2-րդ եռամսյակ					
1	Արենի	02.06.2025թ.- 13.06.2025թ.	Տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների բնագավառ	ՏԿ և ՏԻ հարցերի վարչության պետ՝ աշխատանքային խմբի ղեկավար	Վարդան Հովհաննիսյան
				Առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության գլխավոր մասնագետ՝ աշխատանքային խմբի անդամ	Ցողիկ Բաբայան,
				Առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության ավագ մասնագետ՝ աշխատանքային խմբի անդամ	Լյուսյա Պողոսյան

				Զորահավաքային նախապատրաստության բաժնի ավագ մասնագետ՝ աշխատանքային խմբի անդամ	Հրայր Ասատրյան
				Քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության հողաշինության բաժնի ավագ մասնագետ՝ աշխատանքային խմբի անդամ	Արման Մարգարյան
				Գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության գլխավոր մասնագետ՝ աշխատանքային խմբի անդամ	Գոհար Խաչատրյան
				ՀՀ ՆԳՆ ՓԾ Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի պետ՝ աշխատանքային խմբի անդամ	Վարդան Գրիգորյան
				Զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ՝ աշխատանքային խմբի անդամ	Արամ Կոստանյան

				Ֆինանսական վարչության պետի պաշտոնում փորձագետ՝ աշխատանքային խմբի անդամ	Գվիտոն Դավթյան
				Կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ՝ աշխատանքային խմբի անդամ	Հուսիկ Հարությունյան
				Կրթության, մշակույթի և սպորտի վարչության խորհրդական, առանձին գործառույթներ համակարգող	Մայիս Նազարյան
				Առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության գլխավոր մասնագետ՝ խմբի անդամ	Լիլիա Կարապետյան
				Քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ՝ աշխատանքային խմբի անդամ	Աշոտ Մինասյան
				Քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ՝ աշխատանքային խմբի անդամ	Աշոտ Օհանյան